

Քաղաքացի

Զեկը չեղանկեր

891.99

Բ-64

ԳԱՌՆԻԿ ԲՆԱԼԱՅԵԱՆ

ՆԵՐՇՆՉՈՒՄՆԵՐ

1908

291.99
2-64

13 APR 2011

91.99

R-64

ԳԱՌՆԻԿ ՔԵԱԼԱՇԵԱՆ

из

Ն Ե Ր Շ Ն Չ Ո Ւ Մ Ն Ե Ր



ՈՏԱՆԱԻՈՐՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ԳՐԻՈՅԿ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՆԻՖՏՐԱՑԱՐԺ ԿԱԿԱՐԱՆ ՄԵՐՈՅ ԷՃՈՒԱԾՆԻ

1928

30 JUL 2013

60618

13 APR 2011

Handwritten text and stamps on a yellowed piece of paper. The text includes "ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ" (Armenian Republic Anticorruption Committee) and "ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ" (Armenian Republic Anticorruption Committee). There are also handwritten numbers "1183" and "9/18/1".

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Իմ այս առաջին փորձերը

Ներում եմ կեանքիս Ուղեկցումուն—

Աստղիկին

Գառնիկ.

* *

Առկայծող փայլը սիրոյ ծարաւի

Աչերի շողի.

Այրող կարօտը վերջին բարեի

Համբոյրի ցօղի:

Երազ-մանկութեան յուշերի միջին

Հեքեաթը ոսկի.

Մի վարկեան ապրող ծաղկի առաջին

Շիթը բուրմունքի:

Ա՛խ, սրտի կարմիր յոյզերից բուսած՝

Անմահ ծաղիկներ,

Վառ ծաղիկներից ծիածան հիւսած՝

Անհրճ—ցօղիկներ:

Կոյսերի թովիչ աչերից վառող

Սիրոյ մերաժներ.

Ա՛խ, հուռի անյայտ կարօտով այրող

Հոգու երազներ:

Անցիր ընկեր՝ զուր մի տանջի
 Սին յոյսերով քո հոգին.
 Էն ծաղիկը սարալանջի
 Թող ծածանուի մեղմագին:

Դու չես հասնի ... Դու չես պոկի
 Բաղդի ծաղիկն այն սիրուն.
 Ա՛խ, չէ բաժին նա ոչ ոքի,
 Զուր մի թափի դու արիւն:

Տոչորւել են, տանջւել երկար,
 Մագլցել են սարն ի վեր.
 Բայց երբ նա մօտ, մօտ կգնգար,
 Նոքա ցած են տապալւել:

Զուր մի վազի երջանկութեան
 Սուտլիկ չողքի հեաքերով,
 Յոյս ու սուեր թող գան, երթան.
 Տառապանքով, վէրքերով:

Թող ծաղիկն այն ժպտայ, զիւթի.
 Հրապոյրով գրաւի.
 Դու անտարբեր չողով ժպտի՝
 Անցիր կարօտ, ծարաւի:

Սրտանալ աշուն ...

Տերեն է սահում մահուան սոսափով ...
 Գիտեմ, որ գարուն նորից կծաղկի.
 Նորից դարձնումի թրթռուն թափով՝
 Պիտի բաբախէ աղբիւրը կեանքի:

Գիտեմ, որ մահւան դեղնութեան ծոցում
 Մայր հողը կեանքի սերմեր է կրում,
 Որ կսրծանումի աւերի բոցում՝
 Տառապանքն է մեր ապագան կտում:

Գիտեմ ... բայց ամեն անկումի դիմաց՝
 Մրմնւում եմ զգում սրտիս խորքերում.
 Ու մի երկդիմի, յուսահատ կասկած՝
 Մի վարկեան զարթ հոգուս է տիրում:

Ինչպէս կուզէի մի օր, մի վարկեան,
 Չլսել հառաչ, չտեսնել արիւն.
 Թէկուզ թովչանքով մի կախարդական—
 Մեր կեանքը դառնար դրախտ մի սիրուն:

Գիշատիչ տենդով մարդիկ իրարու
 Դադրէին վայրագ ատամ սրելուց.
 Խաւարը յաղթւած խուսափէր հիտու,
 Զարդէին ոգու կապանքներ ու լուծ:

Գիտեմ, որ չուտով կհասնեն մարդիկ՝
 Էլ՝ դօրադօյի կանաչ ափը զով.—
 Բայց ես, ես այժմ կուզէի մօտիկ,
 Տեսնել այդ օրը ... թէկուզ երազով:

Գիշերն է երգում անշնչի, լռին,
Աստղէ ցնորքներ լազուր մոքի մէջ.
Շողեր պլըլւած մեղմիկ զեփիւռին՝
Երեւ ալեակով կայծում են անշէջ:

Շրջում են հարրած սաւերներ յուշիկ,
Որպէս սիրահար գիշեր թագունուն,
Կուտում միատեղ սրտադոդ, սուտիկ—
Գաղտնարան հիւսում հալածւած սիրուն:

Խոր լսութեան մէջ զոյգ սրտի թրթիւ ...
Եւ ձայնակցում է դայլայլին անուշ
Իմ սիրոյ երգը՝ գրկին սոյլ, զրգիւ,
Գիշեր թագունի, երանգ ու մշուշ ...

Ես էլ կուզէի դարձած երգ, մրմունջ—
Սաւառնել սիրոյ աստղոտ գիշերին.
Սիրտ, չոգ համուրեկ և որպէս անուրջ՝
Անէ չքանալ մուշում լռին:

(Ա.ԱճԱՌԱՆԱՅԻ ԿԱՐՕՅԻ յԻՇԱՍԱԿԻՆ)

Լոյսի կարօտ, կարօտ փայլուն
Արևի.

Ես բաց արի թերթ սիրուն
Ծարաւի:

Ես կեանք ունիմ միայն մի օր
Կարճատև.

Թո՛ղ ինձ հաւի շիթ լուսաւոր
Մի թեթև:

Ա՛մպ է սակայն. կղայ անձրև
Օրն ի բուն.

Այսօր էլ չի ժպտայ արև
Սիրասուն:

Ա՛խ, ես երկար սպասեցի
Արևի,

Ու մեռնում եմ լոյսի, բոցի
Ծարաւի:

Հեռաւոր երկրից մի ձայն եմ լսում,
Որ կանչում է ինձ մաշող կակիծով.
Ու հազար գաղտնի չչուկով խօսում—
Կեանքս գարձնում տառապանքի ծով:

Ու լքման մթնում լուռ ու հանգարտիկ
Լսում եմ հեծածանք սրտիս խորքերից.
«Ինչո՞ւ ես լալիս, այ աղիւղ սրտիկ,
Ի՞նչ հին վէրքեր են բորբոքել նորից»...

Լուռ, անպատասխան հեծկլտում է նա
Ու ձգտում մշուշ գիրկը անյայտի.
Չգիտեմ, ճամբէս երբ կվերջանայ,
Ա՛խ, երբ կհասնեմ կանաչ հանգստի:

Անդեկ նաւի պէս ալիքից տարւած՝
Անձե տնչերիս ե՛ տէր, ե՛ գերի,
Թիավարում եմ չւար, մոլորւած
Հայեացքս ուղղած անհաս ափերի:

Եւ երազի մէջ անէ՛, անմարմին
Քաղցրիկ տանջանքով փնդրում եմ յաւէտ.
Ես անխօս ստրուկ սրտիս մղումին՝
Գնում եմ՝ մեռնեմ որոնածիս հետ:

Ինչո՞ւ բոյրով,
Տաք համբոյրով
Ինձ փառեցին թաւիշ-վարդեր.
Որովհետեւ
Շուրթով թեթե՛
Եարս էր գգուել նոցա թերթեր:

Լուսաբացին
Ցօղն ամպածին՝
Կուրծքս ինչո՞ւ լցրեց կորով.
Ինչո՞ւ.— չէ՞ որ
Աչերն աղւոր՝
Շէթ են խառնել նրանց սիրով:

Սիրտս խոցւած,
Արնով օծւած ...
Ինչո՞ւ ինձ չեն լքում ցաւեր.
Ի՛նչպէս ... չէ՞ որ
Կեանքն իմ հօր՝
Նա դարձրեց այսպէս աւեր:

Ահա սե վի՛հ
Կտարածւի ...
Այս ինչ քաղցր է գերեզմանում.
Զգում ես դու,
Ի՛մ կենսատու,
Որ կարօտդ է ինձ սողանում:

Ատեն թկուղ ...
Ես միշտ քնքուշ՝
Քեզ եմ երգել կեանքի ծովում:
Ցանն էլ, Մանն էլ
Քանգր է տանել.—
Եթէ այդ քեզ քաղցր է թւում:

Ա Շ Ո Ի Ն.

Տխուր աշուն ... դիակնացած՝
Տարածելի են ծաղիկներ.
Տերևները մաղւել են ցած,
Դալիայից են ճիւղիկներ:
Անձրե՛ ... անձրե՛ ... ձանձրոյթ, թախիծ.
Սիրտ ու երկինք ամպամած.
Ու ելնում է խոնաւ հողից
Սնո գոլորչի ... Եւ կամաց
Թափանցում է կուրծքդ—ճնշում,
Ու չգիտես ինչ անես,
Որ հոգեսպան այս մշուշում
Անձկութիւնից չմեռնես:

* *

Ծաղիկներէց ցոլաց անուրջ ծիածան
Ես որսացի նրա գոյներն անմարմին.
Համբոյրի ցօղ, աչերի շող ցիր ու ցան,
Կոյսի ժպիտ վառուում էին այդ ժամին:

Գաղտնի սոյլով համերգում են սար ու ձոր,
Ես մարեկ եմ բուրմունքի մէջ և ասեա,
Թէ Ֆէան է համբոյրներով կրքածոր՝
Ցօղել դաշտեր, ծառ ու ծաղիկ, արօտ, սէզ...

Եւ անմարմին երազի մէջ նա յուշիկ՝
Ծածկում է ինձ արբեցութեան մշուշով.
Ես ապրում եմ ակնթարթով անուշիկ,
Ե՛ս միայնակ, իմ անուրջի վառ յուշով:

* *

Ոսկի ամպից ծոր տալով՝
Սահեց լոյսի շիթ,
Վարդի ժպիտ խայտալով,
Փայլեց կրեսիդ:

Միրաժ անցաւ մի ժպտուն.
Պատկեր իր գրկին.
Էն ես էի, քո հոգուն
Զուլւած իմ անդին:

Երկնի կապոյտ խոհերի մէջ
Առկայծում են հուր անուրջներ.
Մշուշ հագած մի յուշ անշէջ
Պլպլում է դողդոջ, երեւր ...

Թւում է, թէ լուսինն է այն՝
Դստրիկներով իր լուսածին.
Որ մշուշում լուռ ու անձայն
Մի գաղանի երգ մրմնջացին:

Մրմնջացին, սահեցին լուռ՝
Մեղմիկ նիրհած դադրած երկրով.
Սիրտս լցրին յոյզ ու սարսուռ,
Սիրտս լցրին դարձան կորով ...

Կուզէի քեզնից հեռու մորմորակ՝
Յուսահատութեան անտառում մոլոր.
Նաւս թափառէր հեռաւոր ծովեր
Ամպեր պատէին ճամբէքս բոլոր:

Արտուրը ծլաց թաւուտի խորքում —
Թւար դու ես այդ — ու լինէր կրազ,
Պարտէզ ու ծաղիկ բուրէր քո գրկում,
Ես ծիլ կանաչիդ մնայի անմաս:

Դու մի կարկաչուն աղբիւր փրփուրի —
Ես կաթիլ ջրիդ մնայի կարօտ.
Ինձ անապատում թող արևն այրի,
Չորս կողմիդ ծաղկեն դաշտեր ու արօտ:

Ու քեզ տենչայի, միշտ քեզնից հեռու,
Ես անյայտ սոււեր — գու չո՞ղ արևի.
Քեզնից փախչէի — քեզ որոնելու —
Համբոյրիդ՝ կարօտ, չուրթիդ ծարաւի:



Պարտէզի մէջ բոյր ու ծաղիկ—
Մթնշաղ.

Ներհի մէջ սէզ, ծան ու ճիւղիկ,
Յօղ ու շաղ:

Լուսին. բոյրի խելառ արշաւ
Սոյլերով:

Աստղ ու ժպիտ սիրոյ ծառաւ
Հոյլերով:

Գաղտնիքների սօսափ, զարթնում
Մի յուշից.

Զոյգ աչերի ցոլքեր՝ մթնում,
Մշուշից ...

Յուր կաթնաչիթ. փրփուրի լանջ
Ու համբոյր.

Համբոյրներից կրքի ճաճանչ,
Հրապոյր:

Մրմունջների և երգերի
Շատրւան

Արար աշխարհ երգին գերի—
Գիշերւան:

Գաղտնիքներից բուրմունք թովիչ
Մի թաքուն,

Եւ գուրգուրող զո՞վ ու հովից՝
Անունը քուն:

Հարցրի առին.—ինչո՞ւ կանաչիկ
Ափդ ես համբուրում,
Երբ մէջդ են նայում ծաղիկ ու աղջիկ՝
Նրանց գուրգուրում:
Ու յոգոց հանեց վարարած առուն՝
Լոկիկ ու մնջիկ.
Ես դարձայ սօսուն,—Դու այնքան սիրուն
Քանց մարալ աղջիկ,
Ինչո՞ւ ես ձգւում գիրկը լաղուրի ...
Լուռ սօսափեց նա.
Ո՞չ որ ինձ հասաց, ինչո՞ւ կբուրի,
Վեր կբարձրանայ.
Զևիւնն ինձ հասաց.—ինչո՞ւ կգգւի
Թարմ սէզ ու վարդեր.
Բլբունն ինձ հասաց.—ինչո՞ւ կձգւի
Դէպ վարդի թերթեր:

Եկայ նրա մօտ ու գիրկը ընկայ,
Գրկում՝ վարդ, ծաղիկ.
Նրա աչերում՝ գիշեր լուսնկայ,
Վարսերին՝ ցօղիկ:
Շուրթերի վրայ գարուն կշնչի—
Հասակը՝ սօսի.

Հանջը մի պարտէզ, մի ծով կանաչի՝
Բուրմունք կհոսի:

«Ինչո՞ւ» Ասացի, նայեցի նրա

Աչերին պայծառ.

Ու հազար ձայնով պատասխան առայ՝

— Սիրելիս համար:

Ս Ի Ր Ե Լ Ի Վ Ա Ջ Գ Է Ն Ի Ն.

Զով գիշերին

Մէջը լոխ

Քնած երկրին երգ է մնջում....

Երբ իմ սրտում

Երգ կայ տրտում՝

Այն քեզ կտամ վառ անուրջում:

Ճայն է վայում

Ամպ-քուլայում,

Ծովն է զգում ճերմակ մշուշ.

Իմ նաւակում

Ծովն եմ երգում—

Քո երգն է այն, ընկեր անուշ:

Արցունք—ցօղում՝

Վարդն է լողում,

Սիրտն է լալիս կեանքի ճամբին.

Վիշտս՝ անեղերք,

Սիրտս՝ աներգ,

Իմ երգն ես դու, ընկեր անգին:

Դու հեռացար ...

Յուշով պայծառ

Քո անունով երգս է զնգում.

Սիրտս՝ խոցող,

Կեանքի դու ցող,
Եւ լոյս, և վիշտ անլոյս կեանքում:

Սև թաւաւաւում
Լոյսն է մթնում,
Ես շարած կեանքի ճամբին.—
Հոգուս երկնի՝
Հուր կենդանի,
Յոյսի աղբիւր, ընկեր անդին:

* *

Փոթորիկ, փոթորիկ ահուկի,
Էլ ծովից փրկւելու չկայ յոյս.
Ալիքներ, հրէշներ ժայռերի՝
Հարւածում, փշրւում են անոյժ:

Մթութիւնն արձակում է սոյլեր,
Հարւածներ մեր խղճուկ նաւակին.
Ժայռէ ժայռ ենք տարւում վար ու վեր,
Հնչւում են լաց ու կոծ ցաւագին:

Միատեղ են կուտւում ալիքներ
Մի վայրագ, դիւային խորհրդով.
Խենթ տարերքն է հնչում լալիքներ,
Լալիքներն են պայթում որոտով:

Կատաղի մեր նաւակն է տարւում,
Դէմ ու դէմ՝ մի սեւ ժայռ անարկու.
Եւ ժայռին է նաւակն ընդհարւում,
Թշնամիքն են նայում մէկ մէկու:

Հա, մահաւան ոռմբերը կպայթեն,
Կթափւեն մեր գլխին կարկուտով —
Խնկ որոտ լսում եմ ես արդէն,
Փրփուրով պիտ օծւեմ ես շուտով:

Դէ, յառաջ ... փոթորիկ, կործանում,
—Ձեզ ողջոյն— եմ ճշում ես անահ.
Ինձ արդէն յորձանքներն են տանում,
Ու ժպտում փոթորկոտ, վսեմ մահ:

Պղնձէ գուժկանի սև բօթը լսեցիք,
 Եւ անկման սօսափներ խուժեցին ձեր հոգին.
 Դուք տեսնոք կործանւած պատկերը գեղեցիկ
 Եւ հեռւից ձեզ հասան ողբ ու սուգ ցաւագին:
 Լսեցիք ... և լքման խաւարի ահարկու
 Պատմութեան ընդդրկեց ձեր հոգին կարճատեւ.
 Յուսահատ միմունջներ ձայնեցին մէկմէկու,
 Շարէշար դադաղներ կազմեցին սև հանդէս:
 Եւ անցան ձեր հոգու դադաղներն անհամար ...
 Ես հարցրի.— Իմ Ոգի, թափանցիկ լոյսի շիթ,
 Այս լքման խտաշուք խաւարը դու անցար՝
 Արդեօք մի յոյսի շող չառկայծեց առաջիդ ...

Ու լին մղումով յանդուգն իմ Ոգու
 Սև մահւան մշուշից սլացայ ես էն դին.
 Եւ տեսայ միշտ անմար կեանքն անյաղթ, ահարկու՝
 Վառուժ էր երկնահաս լեռների գագաթին:
 Ես տեսայ չառկայծած ժպիտներ լուսաշող,
 Ես տեսայ այրելու պատրաստի հուր-սրտեր,
 Ու պայծառ ապագան անձուկով մեզ մաշող—
 Ապագան աշխարհին ու կեանքին հզօր տէր:

Ինչո՞ւ վառեցին, ինչո՞ւ մարեցին,
 Լոյսերը ինչո՞ւ անցան սրաթի.
 Այսքան հարւածներ, տանջանք հրածին՝
 Ինչո՞ւ են թւում տանելի, թեթև:
 Ինչո՞ւ է անուշ միմուռը վերքի,
 Արտասուքն ինչո՞ւ հանգիստ է բերում,
 Անգուժ խալերը վայրագ տարերքի
 Ինչո՞ւ են ծնում հաշտութիւն, ներում:

Լաց, լաց, հեծկլտանք—սուրացին ահա,
 Դուռս ծեծեցին, անցան ողբաձայն ...
 Ելայ. դէմ ու դէմ լեռներն աթղահայ՝
 Վանգնած խաւարում խոկում են միայն:
 Ինչո՞ւ լեռները թւային դաժան,
 Նա ինչո՞ւ այսօր նայեց դառնացած,
 Ինչո՞ւ չենք յաւէտ չնչում անբաժան,
 Ինչո՞ւ ենք մաղւում երկնից դէպի ցած:

Ես տեսայ անթիւ ջախջախւած գանգեր,
 Յոյզի, իդէալի արնածուփ հեղեղ.
 Իմ անկման բօթը գուժեցին զանգեր—
 Բայց ես, ես ինչո՞ւ չմեռայ այնտեղ:

Ինչո՞ւ սրտերի ջարդերի զիմաց
Կրճքիս տակ վառուեց սիրոյ հուր պապակ,
Ինչո՞ւ սրտիս մէջ զարթնեցիր կամաց
Ու քեզ դգւելու զգացի փափագ:
Երբ այսքան սարսափ, երբ այսքան անկում—
Ինչո՞ւ են Կեանքի պլպլում լոյսեր.
Հեռւից գրաւիչ երգերն են զնգում,
Արեն է վառւում, ծաղկում են յոյսեր:

Ե Ր Գ Ի Չ Ը.

(Պ. Յ. Յ.-ԻՃ.)

Երգչի համար անապատում անուշ զեփիւռ
է չնչում.
Պարտէզներ են ծաղկում այնտեղ, հնչուն աղբիւր
կարկաչում:

Մթնշաղին՝ ծաղիկներից ցօղ է ծծում
Ու համբոյր.
Հանգչում լուսնի կաթնածովի փրփուր-ծոցում
Զովաբոյր:

Մութ գիշերին հոգու երկնում չեն մտորում
Սև ամպեր.
Լքման թունոտ ծովը նրան չի պղտորում
Մահաբեր:

Սրտում՝ երկինք, յոյզի չողից ջահեր ունի
Անհամար,
Սիրա՞ր՝ արև լուսի ծովում—հուր կենդանի
Իր համար:

Նա տանջւում է հպարտ, յամառ, մաշւում անքուն.
Վէրքերով.
Ու մարում է կարապի պէս մահւան դժգոյն
Երգերով:

(Զաւէցիւն)

Յօղով հարբած վարդի նման
ժպտացիր, անցար.
Սև ուրուրներն առան տարան
Աչերդ պայծառ:

Անսուշ երգի մի ելեէջ
Սրտումս ապրեցիր.
Դու բերեղ չիթ, դու լոյս անշէջ
Եղար ցան ու ցիր:

Գարնան մեռնող վերջալոյսի
Շողերից թշւառ,
Դու խաբուսիկ մի կայծ յոյսի՝
Մարեցիր, անցար:

Եւ ալ-վարդի ժպիտ-ցօղից—
Մնացին փշեր.
Եւ ջերմ կարօտ, և մեղմ թախիծ՝
Եւ յուշեր, յուշեր ...

*
* *

Նա լոյսի շողին աղերսանք կարդաց.
—Տար ինձ դու հեռու աշխարհներ, ծովեր,
Թող ես միաձուլ վաղքիւ սրբնթաց՝
Լոյս ալեակներով տարւեմ վեր ու վեր ...

Իրանդ անմարմին զրկեմ երազով,
Փնդրումի յոյզով խուզարկեմ յուշիկ
Վհերդ բերեղ ... Եւ բուրալինց, զո՛վ
Կեանքիդ փրփուրում ննջեմ անուշիկ:

Եւ անէութեան վարկենին վսեմ՝
Չուլեմ Գաղտնիքի մօայլ հանգոյցին.
Ապա նոր երգով դէպի Կեանք հոսեմ,
Արեւի երգիչ, որդիս լուսածին:

Տնըում է մեղմ հսկայ սալը պողպատի,
Գիւղի դարբինն աւարտում է մի շղթայ.
Մուժը արդէն արար աշխարհ կպատի,
Մթնում փորձանք ու հազար չար կվխտայ:

Բայց պետն այսօր տեղ ահեղ հրաման.
—Շղթաները պահասում են բոլորին.
Եւ մինչև լոյս հան չարժում է նա կռան,
Եւ մինչև լոյս թափում արցունք դառնագին:

... Լուսաբացին էն դարբնոցի առաջով՝
Եկան անցան բանտարկեալներ շարէշար.
Դարբինն ընկաւ մի յուսահատ հառաչով—
Որդու ձեռքին իր իսկ շղթան կգնդար:

Ջարդը վերջացաւ ... կրեցին, տարան,
Գետնին մնացին կոճղեր չորացած.
Ջարդւած սէղերի ալիքի վրան՝
Դեղին տերևներ մաղւած դէպի ցած:
Շինում են, շինում. կաւարտին այսօր,
Կուռ բազուկները գործում են յամառ,
Եւ անտառի տեղ գոռ չէնքի հզօր՝
Կանգնում է արդէն յաղթական կամար:
Եւ ծուխն է կշնում, շառաչ օրն ի բուն,
Մեքենաների խոնթ նւագի տակ՝
Աշխատում են լուռ. . Մուր, կեղտ և ածիւն
Դէմքերն են դարձրել զանգւած դժնդակ:

Այրում է նոցա կարօտը անլուր,
Այն կանաչարոյր ազատ անտառի.
Ժխորի միջից հնչում է տխուր
Անկման միմունջը թփի ու ծառի:
Ա՛խ, քանի անգամ—թարմութիւն, կորով,
Երգել են նոքա անտառի գրկին,
Եւ ծառերն իրենց մեղմ սօսափներով՝
Բուրմունք են տւել նրանց վառ երգին:

Շաշում են փոկեր, սուրմում է չոգին,
Երկունք է մտնում տառապանքն անչափ,
Եւ պայթման մօտիկ փոթորկի ոգին՝
Թանձրամած օդում շնչում է սարսափ:

Կարմիր ամպերից՝ անձրև արնածոր ...
 Անյոյս բռնկում ... յուսափայլ շողեր.
 Եւ մօտ, շատ մօտ է հնչում օրէցօր
 Հուժկու յաղթութեան փողը կենսաբեր:
 Եւ սան հողի տակ սերմերն են աճում,
 Կեանքի երկունքում սօսափում են լուռ.
 Մի նոր Անտառ է թոյլ սաղմի ծոցում՝
 Փրկութեան երզը սուրում քաղցրալուր:
 Եւ կանցնեն օրեր ... Վերջին յաղթութիւն՝
 Կծնել լոցիցն ահեղ պայքարի.
 Եւ Նոր Աշխատանքն Անտառում սիրուն՝
 Կրկին թարմութիւն ու կեանք կվառի:

Ա. Ր. Ծ. Ի. Ի. Ն.

Լեռներում ճախրող Արծիւ սեւթնյր,
 Ո՞ւր ես սլանում այգպէս սրաթե.
 Լսիր, այ Արծիւ, մի պատասխան տուր,
 Միթէ պիտ վերում ճախրես յարատե:
 Երբ շանթը երզ է սուրում ահարկու
 Միթէ չի պատում անկումիդ մասին,
 Որ ամպեր պիտի զարնեն մէկ մէկու
 Ու ներքե քամեն քեզ հետ միասին:
 Կաթիլների հետ մաղւող անձրևի՝
 Պիտ գահավիժես գարշաճոտ ճաշիձ.
 Ու շատ չի անցնի, երկար չի տևի—
 Դու կգալարես անկումի աշից:

Արծիւն իջաւ սարի ծէրին,
 Ամպը բացեց ճանապարհ.
 Շանթ ու որոտ ներքե բերին՝
 Նրա ձայնը քաջաբար:
 «Ես Արծիւ եմ, երկնի որդի,
 Փոթորկի մէջ մեծացած.
 Ոչ ոք, ոչ ոք ինձ չի յաղթի,
 Զի տապալի դէպի ջած:
 Փոթորկի հետ պար եմ բռնում,
 Լողում նրա զով ծոցին.
 Բքի շրթից համբոյր առնում,
 Ծնչում բուրմունք երկնածին:
 Բունս եմ մանում մութ գիշերին,
 Մնում մինչև արեծաղ,
 Լուսին՝ նրա զով փէշերին
 Որսի գնում համարձակ

Ինձ գերեզմանս ես կհիւսեմ—
 Օթեանում ամպերի.
 Կեանքիս նման մահս էլ վսեմ՝
 Ինձ խնթ հանգիստ կբերի:
 ... Երբ մրրկից ժայռն է տնջում,
 Ես ննջում եմ ծկրպերին»
 Երգեց, ամպերն էն բարձունքում
 Նրա ձայնը ինձ բերին:

Լսեց հոգիս ու սլացաւ էն Արծւի մօտ,
 Դէպի վեր,
 Արծիւն անցաւ, չառաչեցին շանթ ու որոտ՝
 Կարէվեր:
 Ժայռի սրտից վերեւ ելան քուլայ-քուլայ
 Սև ամպեր.
 Քո կարօտով, էյ ջան Արծիւ, ժայռը կուլայ.
 Անհամբեր՝
 Նա կսպասէ, որ ներքեւ գաս, ու ես էլ քեզ
 Կսպասեմ,
 Բայց դու բարձրում, ժայռից բարձր ես, մրրկի պէս
 Դու վսեմ:
 Եւ անձուկդ թնդ ինձ տանջի, միշտ դէպի վեր՝
 Հրապուրի,
 Դէպի գիրկդ, հզօր Արծիւ, դու միակ տէր—
 Լազուրի:

ՍԻՐԵԼԻ ՄՈՒՇ--ԻՆ

Հնկեր, դու անցիր քո փշոտ ճամբով
 Սռանց յուսաբեկ հառաչանքների.
 Անցիր տանջանքի ու վշտի ափով,
 Բայց երբէք վշտին մի լինիր գերի:

Սիրիւր ցնորքներ, հեքեաթներ ոսկի,
 Հարբիւր գիշերի անուշ մոայլով.
 Բայց երբէք խաւար քեզ չհամակի,
 Սիրտդ թնդ վառւի անուրջի փայլով:

Գաղտնիքներ որսն աստղոտ գիշերին,
 Սպրիւր վարկեանի թովիչ շշուկով.
 Սակայն քո սիրտը յարատեւ լսին՝
 Երբէք թնդ չապրի գաղտնիքի շուքով ...

* *

Ձկարեկցես ոչ ոքի,
Ձիղճաս մէկին.
Թող միշտ ապրի վեհ Ողի
Քո մէջ անմեկին:

Ում կարեկցես՝ փոքրոգի
Ու ոչինչ է նա.
Դու մի խղճա ոչ ոքի,
Եւ անցիր, գնա:

Միշտ հարւածիր. վատերին՝
Շանթիւր անխնայ.
Աշխարհ դառնայ քո գերին՝
Դու մենակ մնա:

Միշտ խուսափիր քեզ համար.
Պսակ հիւսողից.
Ու պոկել տենչա՝ յամառ
Այս զաւրիւ հողից:

* *

Ձիւն, ձիւն անսպառ ... և փողոցներում
Բուսնում են սարեր.
Ահա պատի տակ, մռայլ մայթերում
Խեղճեր են սառել:
Հանգստի յանձնէք դիրքը անշունչ,
Մի սառ գերեղման.
Թէ չէ ծածկում է ձիւնը անմոռնչ
Սաւանի նման:
Ազոռաւներն ահա կուային, անցան,
Տրամւայն է սուլում,
Յողնած աչերս շէնքեր ցիր ու ցան
Մէկտեղ են ձուլում:
Տաք մուշտակներում փաթաթւած նոքա
Սլացան մօտով.
Իսկ թաղման մասին ո՞վ պիտի հոգայ—
Կկորչեն շուտով:

Գործարաններից չի լսում շառաչ,
Գիշեր է արդէն.
Մշուշ աչերով ձիւներն անհառաչ
Նոցա կթաղեն:
Կթաղեն նոցա ... և դուցէ շուտով
Մի գիւղից հեռու—
Կգան սիրելիք աղի արցունքով
Նոցա փնդրելու:
Գործազուրկներից լուր կուզեն նոքա.
—Ասացէք—արդե՞հ

Հեռաւոր գիւղից զոյգ բանւոր հսկայ

Ձի տեսել ոչ որ:

Ո՛չ որ չտեսաւ, ոչ որ չի պատմի

Խեղճերի մասին,

Ու կմատնեն սառ մոռացումի

Նորա միասին:

Սառած սրտերը վաճառք են հանւած

Ձաղիր կարիքին.

Ձոյգ-ղոյգ անցնում են հաճոյքով գրկւած

Սահնակի միջին:

Անցնում են մարդիկ, ոչ որ չգիտի

Թէ ինչ կայ այնտեղ.

Դաժան ժպտի տակ ձիւնի սառ շերտի՝

Ծածկւած ահեղ:

Այս խնւէ փողոցի անկիւնից նորա

Կելնեն գարունքին ...

Գանգերի մասին թող մարդ չհոգան,

Չյանձնի հողին:

Քաղցածների դէմ նորա դադաղի

Բանան ապադայ,

Ընդվզման երգը նոցա կատաղի

Ամեն տեղ ղնգայ ...

Գործարանների ծուխը դադարի,

Որջերից սողան.

Եւ յաղթ արշաւից նոցա քաջարի—

Կուշտերը դողան ...

... Բութը ոռնում է և ձիւնի հիւքեր

Սարեր կուտակում,

Լուսինն է թափում սառցաշիթ ցուքեր—

Քնած քաղաքում:

—Ո՛ւր ես տանում ինձ, դժւ, անյայտ մղում,

Հեռում փրփուրներ ծխում են սուսիկ.

Անականկալներ չորս կողմն են լողում,

Անուրջով ժպտում ափեր խաբուսիկ:

—Լճու, տանում եմ քեզ հեռու, տարագիր՝

Մի վայր ցողաբոյր—երկնով լուսաշող,

Խենթ վայելքներով ծփուն մի երկիր,

Գրկին Արբուսներ, Յանկութիւն մաշող:

Գաղտնիքներ անհաս կվառւեն լուսով,

Սկիզբն ու վախճան կպարզեն այնտեղ.

Եւ քո առաջից խելան քաօսով—

Կսուրայ, կանցնի Անհունը ահեղ:

Ապա կգրկէ քեզ Մոռացութիւն՝

Անիմանալու ցողերից բուրած.

Քեզ միշտ կհսկէ Լռութիւնն արթուն՝

Յաւէտ սառոցի շուրթը համբուրած:

—Անցիր, իմ նաւակ ... ձայները մարեն,

Այս ո՛վ է բանում Գաղտնիքի լեզուն.

Եւ ո՛վ Անհունից այսպէս խենթօրէն

Առկայծում է պարզ նւագներ հնչուն:

Լճու, լճու ... թող հեռուն միշտ անյայտ լինի,

Գաղտնիքը սուգի մշուշում լռին.

Մեզ միշտ թող մաշէ երազ գեղանի,

Միշտ անհաս միանք Կեանքի ափերին:

*
* *

Միայնութեան սրտամաշ օրերը անցան,
Ջանձորայթ, երկինդ ու կասկած կղան յիր ու ցան
Ես չեմ ուզում միայնակ սղասման յոյզով՝
Հեռու կեանքի ժխտելից՝ ապրել երազով:

Թող կեանքը բիրտ, հոգեսպան, թող վայրի լինի,
Բայց նրա մէջ կայծում են հոգիք գեղանի.
Ես կը որսամ շողերը սրտից բոլորի,
Ու մի արև կհիւսեմ, որ կեանքը վառի:

Կեանքում անլոյս, անարև սարսափի մթնում
Տոչորում են Ան'ելի արցունքում, թոյնում:
Մահն է այնտեղ սաւառնում, չնչում է աւեր,
Ծնում վերքին՝ նոր վերքեր, ցաւին՝ նոր ցաւեր

... Ողջոյն, խաւար հոգիներ, ձեր անլոյս կեանքին
Եւ հրդեհով վառելու ոսկէ տենչանքին:
Ողջոյն վսեմ Պայքարին, Կեանքին, Անկումին,
Եւ Յաղթութիւն աւետող լուսաչոյզ ժամին:

*
* *

Ախ, ես կուզէի մեռնել գետափին՝
Պաղ ալիքների խենթ նւագի տակ.
Կուզէի մեռնել մռայլ ծովափին՝
Օձւած ջրերի փրփուրով ձերմակ:

Կուզէի մարել արեածագին
Շողերի կրքոտ համբոյրների տակ.
Չորս կողմն բուրմունք ծաւալէր այգին,
Մեղմ սօսափէին անմոռուկ, մեխակ:

Կուզէի իմ լուռ դամբանին մօտիկ
Ծաղկունք գրկէին հարբեցած ցօղով.
Եւ ժպիտներս վառէին մեղմիկ—
Նոցա շուրթերին մի անմահ շողով:

Ախ չէ ... մեծ, ցնցող ու հուժկու կուի
Եւ խենթ պայքարի շառաչի միջին.
Կուզէի Կեանքի հրդեհը վառի—
Ու նրան ձուլեմ ժպիտս վերջին:

Ինձ թաղէք լուսնկայ գիշերին,
Աստղերն անուշ երգեն թող վերաս,
Լուսինն էլ մշուշից ինձ լոխ՝
Թող ցոլան ցնորքներ և երանգ:

Ես հարբում հաճոյքով վառ գարնան,
Սօսալով վարդերի, համբոյրի.
Իմ մօտից զեփիւռներ սլանան,
Երկիրը թարմութիւն թող բուրի:

Եւ կեանքի աղմուկին չստ մօտիկ—
Փորեցէք գերեզմանն իմ անշուք.
Արևի ծէգի հետ թող մարդիկ
Տարածեն Պայքարի խենթ աղմուկ:

Ես զգամ արշաւը ռազմական
Տառապած իմ եղբոր յաղթ Կուի.
Սրտիս մօտ բարախէ Ապագան,
Եւ Յոյսով և Լոյսով թող վառի:

Եւ կեանքի լուսնկայ գիշերին՝
Աստղերը գութգութն ինձ յուշիկ.
Եւ կարմիր, լուսալան օրերին՝
Ապագան օրհնարդէ անուշիկ:

Փշրւիր գրիչ, որ ես չեմ կարող
Այն բոլորն ասել—ինչ կայ սրտիս մէջ,
Փշրւիր գրիչ, որ սիրտս վառող
Ձեռ կարող կայծեղ կրակը անչէջ:

Փշրւիր գրիչ, որ տանջանքն անհուն՝
Սրտիս խորքերում թաղւած պիտ մնայ,
Որ հոգիս անխօս ու յաւէտ խոհուն—
Պիտի յօշոտեն յոյզերն անխնայ:

Ի՜նչ անեղ մրրիկ, ի՜նչ թովիչ յոյզեր,
Ի՜նչ հեռուն անշող երազներ ոսկի,
Եւ ի՜նչ կենսատու վառում են լոյսեր՝
Բայց մարում են լուռ, առանց հուր-խօսքի:

Քաօսն է եռում ... Եւ անհ հուժկու
Թւում է, թէ ես պիտ՝ վառն հրդեհ,
Եւ ճշմարտութեան խօսքով անարկու
Նւաճեմ բոլոր սրտերն երկաթէ:

Եւ քեզ եմ գիմում ... բայց դու անկրակ՝
Հոգսւս, յոյզերիս վայրագ աւերիչ—
Յայտում ես միայն փրփուր սառնորակ—
Հրդեհս մարում: Փշրւիր գրիչ:

Եւ այսուհետեւ քեզանից ազատ՝
Սրտումս եմ ուղում լուռ խորհել միայն.
Փշրւիր գրիչ, ուրախ թէ վհատ—
Թող ես առանց քեզ փոթորկեմ անձայն:

Փ Ո Թ Ո Ր Ի Կ.

Անականակալի ամպերն են չողել
Մեր ճամբի վերայ.
Տարերքի զրկում սոսկումն անարգել
Զայրոյթով կ'եռայ:
Ինձ մահն է գգւում սառը նայւածով
Ջրերի միջից.
Ջրերն են սուրում հարւած-հարւածով
Նաւիս առաջից:
Խեղագարութեան հնչում են երգեր,
Հառաչներ անմիտ.
Պատում է մեղմիւ սրտեր ու աչքեր
Մահւան քղամիտ:
Սարսափն է ծնւում, լուցէք խնթեր,
Ժամ է աղօթքի.
Արեն իր շողից մեռնում է անտէր,
Անհուր, անոգի:
Յոյսը փարոսից շողաց ու գնաց,
Ամպերն են պատել.
Մենք խեղճ մահապարտ երկնից սևագնած,
Կախւած ենք անթել:
Ահա իմ դիմաց տեսնում եմ կանգնած
Ամպի կախազան.
Մահածոր չերտեր կախել մթադնած
Պարանի նման:
Ինձ համար է այդ սոսկումը դժնեայ,
Կանչեցէք դահիճ.
Աչերը՝ մրրկի, դժոխքից գայ նա՝
Մահւան քուրայից:

Ու մահն է շաչում. բայց ես անտարբեր՝
Ժպտում եմ նրան ...
Ու մի խենթ գրոհ ... ալիք ու ամպեր
Մեզ առան, տարան:

Անդունդի ափին կանգնած սրտադող
Լալիս են մարդիկ.
Եւ Յոյսն է մարում քաջակիւն, յաղթող—
Մեռնում հանդարտիկ:
Ես միայն անձայն վսեմ Տարերքին
Աղօթք եմ մեծում.
Ունկնդիր նրա վայրենի երգին՝
Մրբիկ անբջում:
Փրկութեան արեւ-երազին գերի՝
Յուսով եմ վառում.
Հրապուրիչ շողեր կանաչ ափերի
Որոնում հեռում:
Եւ եւ—մեն մենակ—սուղ ու վայնասուն,
Չորս կողմս հառաչ,
Իմ անուրջներով հարբած, երազնւն՝
Թռչում եմ առաջ:

*
*
*

էս գիշերը զո՛վ, լուսնկան անո՛ւն,
Երկինքը լազո՛ւր, օդը անմէ՛ն,
Ծաղիկ, թո՛ւի ու սէ՛ղ նիրհի մէջ ընկած,
Լո՛ւս ... անձ մեղմիկ քամի՛ն չնկճակաց:

Շնկչնկաց, անցա՛ւ ... նրա հետ առու՛ն—
Խառնեց մրմունջը խոնջացած սրտի.
Եւ ասողէր, լուսին հոգեղմայլ, սիրո՛ւն—
Երգում են գաղտնի սիրոյ մեղեդի:

Սիցոս լցնում է մի սարսո՛ւս, մի դո՛ղ
Լուսնի, աստղերի հայեացքը չանթո՛ղ.
Ձովիկ թարմութեամբ կուսական այգի՛ն
Կեանք է հաղորդում իմ ծփուն կրծքի՛ն:

Վարսերս են թրջւում ալմազէ ցօղից ...
Եւ օրօրը մեղմ նործիլ սէզերի—
Սիրոս լցնում է մի այրո՛ղ թախի՛ծ՝
Անվերջ սիրելիու թովիչ յոյզերի:

ՍԻՐԵԼԻ ԱՐ.-ԻՆ.

Դու հեռից խոնջացած մի ճամբորդ՝
Ես ելայ ընդ առաջ կարօտով.
Իմ քնքո՛ւն յոյզերին անհաղորդ՝
Դու անցար անտարբեր իմ մօտով:

Սրտիս մէջ սնեցի ես երկար
Ծաղկածո՛ւի, ցօղաբո՛յր մի պարտէղ.
Ե՛ւ հեշտանք, ե՛ւ համբոյր՝ այնտեղ կար,
Ե՛ւ դղւանք, ե՛ւ աչեր սիրատես:

Սրտիս մէջ կանգնեցի ես տաճար,
Արցունքից վառեցի հոյլ-ջահեր.
Դու անցար ... ու մնաց չարաչար
Ինձ տանջանք ու լքում սեահեր:

Դու անցար սառնաչունչ ժպիտով,
Միշտ հպարտ, միշտ վսեմ ու յաման,
Մոռացման մթնշաղ հովիտով՝
Հեռացար, չքացար ինձ համար:

Չքացար ... բայց տաճարն է կանգուն,
Բայց սիրոս միշտ անունդ է երգում.
Ծնկաչո՛ք պաշտում եմ քեզ թաքուն—
Եւ հանդչում երազով—քո գրկում:

* *

Իբրև քնքնյ սիրոյ գրաւ
Նրան տւի մի փնջիկ.
Փնջիկիս հետ սիրտս տարաւ՝
Սեղմեց կրծքին—լուռ, մեջքի ...

Փնջիկս չորցաւ կարճ օրերից յետ,
Բայց սիրտս կանաչ պահեց նա յաւէտ:

Ռ Ո Մ Ա Ն Ս .

Կանաչ ոստիկով յամիկն է նետել
ձութ-ձութ ծաղիկներ.
Ուղարկում է ինձ անհպում, անթել՝
Համբոյր-ցօղիկներ:

Յամիկ աչերով իմ լուսամուտով
Գիշերն է նայում.
Լուսինը ճրագ կվառէ շուտով
Ամպի քուլայում:

Սպասում եմ ես, նա կգայ շուտով,
Գիշեր է արդէն.

Յամիկ ու լուսին մեր լուսամուտով
Բուրմունք կթափեն:

Բայց դուցէ՛ արդէն ժպտում է նա լուռ
Անձն է կրազում.

Նրան այլ չուրթեր սիրոյ քաղցրաւոր
Հեքեանք են ասում:

Սպասում եմ լուռ. գաղտնիք ու մշուշ
Չորս կողմ կպատեն.

Չէ, կգայ, կգայ հոգեակն իմ անուշ՝
Գիշեր է արդէն:

Մի գնա, ու նստիր ինձ մօտիկ,
 Ծաղիկներն են ընկնում նիրհի մէջ,
 Թարմ ցօղերն են բուրում հանդարտիկ,
 Դալկանում արևի ցոլքն անչէջ:

Գիշերն է սկսում սոյլերով,
 Գաղտնիքներ են սողում ու մշուշ.
 Աստղերն են աւելածում հոյերով ...
 Մի գնա, կանց ինձ մօտ իմ անուշ:

Դու գնաս՝ թնկի ու սէզ ու ծաղիկ
 Կքամեն բուրմունքից ու շաղից.
 Իմ կեանքի թարմութեան դու ցօղիկ,
 Դու գնաս՝ կտիրէ ինձ թախիծ:

Մի գնա ... քո գրկում ես անուշ
 Թնդ ձծեմ համբոյրներ, հրապոյր.
 Թնդ գիշերն օրօրէ մեղ անուշ,
 Շւաքը առաջատու սևաթոյր:

* * *

Ո՛ւր եմ գնում,
 Ի՞նչ եմ անում.
 Ա՛խ, ես ինքս էլ չգիտեմ,
 Էս սև մթնին,
 Ձիւն ու թօնին՝
 Ո՛ւր եմ գնում բքի դէմ:

Տխուր գիշեր ...
 Այրո՛ղ յաշեր՝
 Գարնան, սիրոյ կարօտի,
 Մղում են միշտ
 Դէպի հանդիստ,
 Անյայտ հանդիսան իմ սրտի:

Ճամբէս՝ մթին,
 Ցաւն իմ սրտին,
 Ես գնում եմ շատ հեռու.
 Գնում անվերջ,
 Փոթորկի մէջ՝
 Դարդիս դարձան ճարելու:

*
* *

Մի երեկոյ գունատ աշնան
Դու ինձ մօտ եկար.
Սիրտս մոռնի էր ամպի նման,
Սիրտս էր տկար:

Աչերիդ մէջ ես նայեցի,
Կարծես բիւրեղից
Այնտեղ տեսայ մեղմ կսկիւծի
Մի անուշ թախիծ:

Անկերպարան՝ հազար շողով՝
Նման էր իմին ...
Սիրտս զգաց անուշ զոգով—
Հպում անմարմին:

Քեզ գրկիս մէջ ամփոփեցի
Ու համբոյր առայ.
Եւ ծաղկում եմ քո թախիծի
Վարդերի վրայ:

Վ Ե Ր Զ Ա Լ Ո Յ Ս.

Լեռներն երկիւղով ծուներ խոնարհած՝
Աղօթք են անում երկնի աշարիւ.
Սեղանի դիմաց:
Վերջալոյսի հուր թելերից հիւսած,
Կախւած են ջահեր: Լեռներն օրհներգու
Երգում են կամաց:

Ելած մի գաղտնի հսկայ բուրվառից՝
Կարմրածուխ շերտով ամպերն են խորհում:
Մի ցուք թափանցիկ
Ահա ամպերում կարծես հուր վառեց.
Աղօթքով տարւած՝ լեռներն են նիրհում.
Լնու ու գեղեցիկ ...

Եւ հուր կղզիներ ովկիանի ծոցում,
Այրում են օրպէս ամպէ ողջակէզ—
Հոյակնալ պատկեր:
Եւ խնւ սօսափներ վառւում են բոցում,
Ասես բնութեան խորանում անտես՝
Զնգում են երգեր:

Այն վերջալոյսի հնչում է օրհներգ
Վսեմ գիշերին ... Եւ կամաց, կամաց
Շողերն են մարում:
Իսկ մշուշի մէջ անծայր, անկերպ—
Լեռներն են ննջում սրտով սևամած—
Անյոյս խաւարում:

Գարուն, Զարթնումս Արեան մրրիկ,
Սիրոյ թարմ վերքեր,
Երկնի ճակատին՝ ժպիտ քաղցրիկ,
Սրտերում՝ երգեր:

Վճիտ առումս՝ կոյսի սուտեր,
Դաշտում՝ չաղ ու ցօղ,
Անտառի մէջ գաղտնի սոյլեր—
Գրաւիչ, խոցոց:

Լուսին, Շւարքում մեղմիկ շշուկ,
Թովչանք, հրապոյր,
Ծով-աչերում՝ ցօղ արտասուք,
Եւ համբոյր, համբոյր:

ԱՆՈՒՐՁՆԵՐ.

Արծաթ ժամեր վայելեցի վրիւրում.
Ծովը, գիտես, անուշ չնչովդ էր բուրում:

Մօտ ենք կղզուն, ինչքան չքնաղ են հեռուն՝
Կաթ-մշուշում աստղաչիթերն այն սիրուն:

Դու գիտես, որ ես քո մօտ եմ շտապում.
Թէ չգիտես՝ ում կսպասես ծովափում—

Ի՜նչ, ի՜նչ մենակ. դուերն անցած մի վիշեր.
Ու պատրաստւիր հոգիս գգուել այս գիշեր:

Օ՛, ես գիտեմ, աղօթում ես ինձ համար,
Ինչ ցօղելու՝ շուրթիդ համբոյր անհամար:

Չ'աղօթէիր՝ ծովը խոհուն կլինէր,
Չէին պայթի անակնկալ մրրիկներ:

Ձգում եմ ես, ծովն էլ է լուս աղօթում,
Մի հոգեզմայլ խորհուրդ պահած իւր սրտում:

Մրմունջներ են ալիքներով ինձ գալիս՝
Գիտեմ, ափում սպասում է անձկալիս:

Լուսինն արծաթ՝ ցոլաց, ժպտաց հեռուում,
Արծաթ-երազ փրփուրի մէջ է վառուում:

Գուրգուրանքներ ու համբույրներ քաղցրաչիթ՝
Լնու ... հոյն է այն մեղմիկ փարուում երեսիդ:

Լողն նաւակ, արծաթ ժամեր կտահեն,
Ինձ որոնման ծովում երկնի կպահեն:

Եւ ես անվերջ քեզ եմ փնդրում, դու գիտես,
Անցնում մրրիկ ծովից-ծովիւր սեռանա:

Քեզ եմ տենչում. և դու գիտես անձկալիս,
Որ սէր, զարնն սրտիս—քո մօտ եմ գալիս:

ԲԱՆԻՈՐՈՒՀԻՆ.

Եւ դուք չիմացաք,
Որ մինչ արեծագ՝
Նա կարը ձեռքին անցըրեց անքուն.
Այդ ձեզ չասացին
Խոհերի միջին
Բնկղմած նրա աչերը դժգոյն:

... «Ո՞ւր, ուր ես նայում,
Էդ բնքն է վայում,
Անցնում է ճեղքով մեր լուսամուտի.
Հատորիկ հոգուս,
Մի վարկեան թէկուզ՝
Լռես,—մայրիկդ էլ գործը կաւարախ:

Սպասիր քիչ էլ,
Դեռ չի վերջացել.
Միասին անուշ կճաշենք չուտով.
Ա՛խ, ուր ես նայում,
Ամպի քուլայում—
Էն չո՞ղ էր ժպտաց մեր լուսամուտով:

Վերջացան, անդին,
Լուսով՝ հարսնքին
Շորը կտանեմ, կտանամ նւէր,
Տես, մնաց մի կար,
Չի անցնի երկար,
Իմ բալին էնքան կգնեմ մրդեր:

Ինչո՞ւ ես այսքան
Սառել. մի վարկեան
Կայ, հիւանդ դաւակ, շուտ հաց կլինի ...
Եւ դուք չիմացաք,
Որ մինչ արեւագ՝
Կաթում էր սրտիցն արցունք արիւնի:

Սովամահ սրգուն՝
Ո՞ղջ դիչերն արթուն—
Դառը սգացին աչերը նրա,
Եւ ձեզ չերեաց
Մեղմիւ այրըւած՝
Հետքը արցունքի հագուստի վրայ:

ՀՐԱԺԵՇՏԻ ԵՐԳԵՐԻՑ.

(Սիրելի Առօրին).

Սրտիս մէջ կարօտը անջատման՝
Գնում եմ անծանօթ մի երկիր.
Սնտէրունչ սրբուկի ես նման
Գնում եմ, թափառեմ տարագիր:

Թռչնէլ են հորուսներն իմ ճամբին,
Գունաթափ վարդերն ինձ չեն ժպտում,
Վարդերի տխրաչոյք սօսալին՝
Խառնում եմ երգերը իմ տրտում:

Հրամեշտի սգաւոր երգերով
Թողնում եմ ափերը հայրենի.
Իմ սիրտը սիրոյ տաք վէրքերով
Էլ հանդիստ կանաչ ափ չի տեսնի:

Կժպտայ միշտ բաղլին ինձ խաբելով՝
Բայց նաւս չի հասնի կայանի.
Ես օտար, անծանօթ ավերով—
Կփնդրեմ—ու երբէք չեմ գտնի:

Չեմ գտնի ... Բայց ես միշտ երազով
Կորոնեմ հեռաւոր մի երկիր,
Ուր երբէք անջատման մշուշով
Չմթնի իմ սիրտը տարագիր:

Խորհրդաւոր ու կապտաշէայ հարթավայր,
Եզերքներին գորշ մշուէն է խտանում.
Չորս բոլորիս կանաչ թաւիչն է անծայր
Ծալքերի մէջ երազային տատանում:

Արշաւում եմ... ու փոխւում են պատկերներ,
Բայց կախարդիչ կանաչ թաւիչն անդադրում.
Սլանում է, որպէս յոյսի վառ սոււեր
Առկայծում է կանաչ ցոլքով ու մարում:

Հիացմունքի ոսկի շողեր են կայծում,
Ու վառւում է մէղր խելառ գոյներով.
Իսկ կանաչի կենսաթրթիւ զով-ծոցում
Արթնանում են, ասես, աշխոյժ ու կտրով:

Հարթավայրը ակօսում է մեղմ ժպիտ՝
Կեանքն է զարթնում թրթիռներով, մրմունջով,
Ես որսում եմ՝ բոյր, թարմութեան ցօղ-վճիտ,
Ես որսում եմ Պանի երգը անուրջով:

Աստղնա գիշեր. լճի միջին լուսաշող
Լողանում են, ասես, ճերմակ փերիներ.
Այն երկնքի գաղտնիքներն են մեզ մաշող,
Թէ փրփուրէ կախարդւած խեղճ գերիներ:

Աշխատում են նորա պոկել ավերից
Ու թափւում է, կարծես, երկնից հուր անձրեւ.
Ծառ ու ծաղիկ երգեր հիւսած լալիքից,
Մրմունջները ուղարկում են դէպ վերեւ:

Սօսափներով գուրգուրում է քամին զով,
Ու գաղտնիքով ասես չորս կողմն է շնչում.
Քնած ջրվճն ահա մրմունջ երազով՝
Մի հաճելի հեշտութիւն է ներշնչում:

Եւ աննշում ես ամեն գիշեր սրտայոյզ՝
Մենակ հարբել զով գիշերով լուսաշող.
Եւ քուն մտնել հէնց որ բացւի արշալոյս—
Հեռու կեանքի բիրտ տաղնապից սիրտ մաշող:

* *

Ծաղիկ ու սոյեր, գիշեր լուսնիայ—
Էն ուլ է լալիս.

Նրան եմ փնդրում ... ու չկայ, չկայ,
Ո՞ւր է նազելիս:

Անցայ պարտիզով. վառ ցողիկներով
Դուք էիք լալիս՝

Անհաշ ծաղիկներ, թարմ ճիւղիկներով,
Ո՞ւր է նազելիս:

Նրա աչերից կայլակներ առաք՝
Քամէք սրտիս մէջ ...

Ո՞ւր հառաչն էր այն սլացաւ արագ
Բռբռելով անվերջ:

Էն ցողերն էին թարմութիւն դարձան,
Այնպէս սուրացին.

Որ լուսաբացին կազմեն ծիածան՝
Գունեղ, լուսածին:

Ու փնդրում եմ քեզ արևի դրկին,
Ծիածանի մէջ ...

Ա՛խ, թրբ կծոււեն իմ սիրտն, իմ հոգին
Բոցերումդ անշէջ:

* *

Զարթնումի առաջին տաղնապներ,
Ու հպում դադարնալի ձեռքերի.
Շփոթւած սրտի մեղմ սոսափներ՝
Հայեացքի, շունջի լուս գերի:

Հանդիպում ... եւ անցար դու մօտով,
Նա նայեց աչերով գեղանի.
Եւ յանկարծ սրտիդ մէջ կարօտով՝
Վառւում է անձկութիւն մի դադարի:

Եւ ճամբիդ սմբուլներ ու պուտիկ—
Նրանցից քաղում ես ժպիտներ.
Սրտիդ մէջ ծաղկում են հանդարտիկ
Սիրաբոյր պարտէզներ, հովիտներ ...

Ու քո մէջ վառւում են լուսաշող՝
Հուր-խօսքեր—յանդուգն, անպատկան.
Հանդիպում ... և նրան—սիրտ մաշող
Մնջում ես թոյլ չլուկ մի տկար:

Ընկճըւած՝ մթնշաղ պարտիզում—
Թոթովում, լուռ կա մոլորած.
Ի զո՛ւր են կրքերը քեզ յուզում՝
Կրճքիդ տակ խարոյկներ բոլորած ...

Սիրասոյց, համեստիկ թոթովանք
Ու մարած, անմարմին մի հպում.
Հայեացքով դադանաբոյր մի գգւանք—
Ու տանջանք—մինչև նոր հանգիստում:

Ա՛խ, սիրոյ առաջին տաղնապնդ
Ու հպում հրատապ ձեռքերի.
Ա՛խ սրտի առաջին սոսափներ՝
Հայեացքի, շշուկի լուռ գերի ...

Ս Ի Ր Ո Յ Ե Ր Գ Ե Ր.

(Քաղաժօրէն՝ «Նրգ-Նրգոց»-ից).

I.

Ես դաշտերի սիրուն շուշան,
Արի, բոյր տամ երեսիդ,
Փշերի մէջ ես վարդ աւան,
Խաւարի մէջ՝ լոյսի չիթ:

Ստինքներս այծեմիկի
Զոյգ ձագի պէս թրվուուն,
Ցատկտում են իմ ծով կրճքի
Շուշանների արտերում:

Մարմինս օժեմ անուշ իւզով,
Ծոցիս նռներ ու խնձոր.
Արի գրկենք կրքի դողով,
Ծծիր շուրթս մեղրածոր:

Գիշերն է գալիս, մթնշաղ, սուեր,
 Խնկաբոյր սարում ողկոյզն է ննջում ...
 Ո՞ւր ես, եկ շուտով, ինձ անուշ քուն բեր—
 Կրքի, խենթութեան հուր-սարալանջում:

Ահա քեզ դտայ վարդերի ծոցին ...
 Ո՞ւր էիր թողել ինձ որբ ու անտէր.
 Եւ վառ բուրմունքով լուռ սևաւացին,
 Պատասխան տւին սիրասուն վարդեր:—

Ճա մեր ծոցից եկաւ առնի
 Կիւք ու բոյր,
 Որ շուրթերով իր հոլանի՝
 Տայ համրոյր:

Ամբողջ գիշեր ծծեց անուժ
 Բայր, նեկտար.
 Ահա հարբած հարդ անուշ՝
 Դէ, եկ տար:

Պատրաստել եմ անուշ նախ
 Օշարակ.
 Քիմ շուրթերից, իմ համրոյրից
 Հուր-կրակ:

Արի, խմի՛ իմ շուրթերից
 Կիւք-դինի,
 Ով որ խմի, նա միշտ անմահ
 Կլինի:

IV.

Նռան հատեր թուլիչ խաւեր այտերիդ,
Ծնօտներդ անուշաբոյր խնկաման.
Կնդրո՞ւնք, զմուսս միշտ բուրում են շուրթերիդ,
Դո՛ւ հաղարից, դու բիւրից էլ աննման:

Մարմար ոտով առագաստի չէմքն անցած,
Ժպիտներդ սաթի պէս են ինձ քաշում.
Ամպերից էլ ես կիջնէի դէպի ցած—
Հարբենալու ծոցիդ խաս ու զումաշում:

Ռ Ո Մ Ա Ն Ս.

Մո՛ւթն է սենեակս. դուրսը բո՛ւք սաստիկ,
Ու ձիւն է գալիս.
Իմ միտն է ընկնում մեղմ ու հանդարտիկ
Կարօտ-նազելիս:

Ելայ, լալիս եմ սո՛ւ ձիւնի տակին
Ու պաղ քամու դէմ.
Ա՛խ, որտեղ մնաց իմ գանձն, իմ ոսկի՞ն,
Ես էլ չգիտեմ:

Քնեմ, երազում դուցէ հանդարտիկ՝
Կգայ նազելիս.
Գիշեր է արդէն, դուրսը բո՛ւք սաստիկ
Ու ձիւն է գալիս:

*
* *

Ջորամիջին, վառ լուսնկայ գիշերին,
Սպասում եմ ... և չգիտեմ արդե՞ք ում.
Աստղերն անո՛ւշ փայփայում են ինձ լո՛ին,
Ալիքները չշուկներով համերգում:

Սրտիս թրթիռ՝ ես խօսում եմ մեղմանուշ,
Հարցիր տալիս՝ քարին, թփին, ալիքին.
Հեռուն մոայլ, ծոցին դադունիք ու մշուշ—
Արձագանքը մեղմ սուլում է սիրադին:

Սպասում եմ, ահա սօսափ ... նա չկայ,
Բայց սպասման յոյսս վա՛ռ է ու անմար.
Կգան, կանցնեն չատ գիշերներ լուսնկայ,
Եւ նա կգայ, նա ապրում է ինձ համար:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Ես աշխարհ եկայ, որ Արե տեսնեմ
Անարատդ։

Ես աշխարհ եկայ, որ Արե տեսնեմ
Եւ կապոյտ կամար.
Ես աշխարհ եկայ, որ Արե տեսնեմ
Լեռներ վեհափառ։

Ես աշխարհ եկայ տեսնեմ կապոյտ Մով
Դաշտ, հովիտ ու ձոր.
Աշխարհներ առայ ես մի հայկացքով,
Իշխան եմ հզօր։

Սառ մուացման դէմ ծագեց յաղթական
Անուրջս անէջ.
Ես լի ներշնչմամբ ամեն մի վարկեան,
Երգում եմ անվերջ։

Անուրջս ցոլաց տանջանքներից վառ
Եւ ինձ սէր ծնաւ.
Իմ թովիչ ուժին ոչ ոք հաւասար,
Ձի լինի բնաւ։

Ես աշխարհ եկայ, որ Արե տեսնեմ,
Բայց թէ նա մարի—
Մահւան ժամին էլ պիտ Արե զսեմ
Երգեմ քաջարի։

Ես սիրում եմ սէզն անտառի

Անուշ բուրմունքով.

Եւ հաճոյքը համբոյրների

Անդարձ հմայքով:

Զանգակների զօղանջն ուժգին՝

Հեռուն ու հեռուն.

Առի վրայ նիրհող ուռին՝

Ուռին կիսաքուն:

Եւ խուսափող չքնաղ պատկեր

Մռայլ ու մթին.

Հեքեաթների սուտիկ սուեր—

Անյայտ, անմարմին:

Ինչ խաբում է, հրապուրում

Մութ հանելուկով.

Յաւէտ սիրտն է վիրաւորում—

Քաղցրիկ գաղտնիքով:

Ք Ա Ր Տ Ա Շ.

—Քարտաշ, այ քարտաշ, ճերմակ գոգնոցով.

Այդ ինչ ես չիմում, արդեօք ում համար:

—Է՛յ, մի խանգարի. զբաղւած գործով.

Շինում ենք, շինում սև բանտի կամար:

—Քարտաշ, այ քարտաշ, հնազանդ բահով.

Ո՞վ պիտ հեծկլտայ այդ բանտում խոնաւ:

—Ո՛չ դու, և ո՛չ քո եղբայրն ապահով.

Չէ որ գողութեան պէտք չունիք բնաւ:

—Քարտաշ, այ քարտաշ, դիչերներն անքուն՝

Ո՞վ պիտի տանջւի այդտեղ անդադար:

—Գուցէ իմ որդին, բանւոր դատարկին՝

Այդ է ամենքիս վիճակը թշւառ:

—Քարտաշ, այ քարտաշ, յիշելու է նա—

Անշուշտ նրանց, որ կրել են սև քար:

—Է՛յ, զգուշացիր. քո ճամբէն դնա՛,

Լճա կաց, ամեն ինչ պարզ է մեզ համար:

* * *

Ճս երգում եմ թռչունի պէս միշտ ազատ,
Առանց երգի կեանքը մութն է ու խաւար.
Եւ տխուր է վառ դարունը ծաղկառատ,
Եւ գունատ է արշալոյսը ոսկեմատ:

Առանց երգի մութ անտառը ճնց զարթնի.
Ո՞նց հանդիպի նա նորածագ արեւին.
Աներգ ճնց պիտ ծաղկի յասմիկ գեղանի,
Ու մանուշակ, կակաչ ժպտով ճնց վառւին:

Ողջ աշխարհը նեղ կլթւայ ինձ համար,
Յանկարծ այնտեղ երգի ձայնը թէ մարի.
Իսկ «Սիրում եմ», քեզ, իմ անգին, իմ գոհար,
Ինչպէս ասեմ առանց հնչուն երգերի:

ԲԵԻԵՌԻ ԽՈՅԵՐԸ.

Սատանան իր թեկերն է բացել, Սատանան
Քո գլխին, օ, երկիր հայրենի.
Հրհոսւմ, սաւառնում անարգել, Սատանան
Յիսուսին է ծաղրում լրբենի.—

«Անտառում տերեւներ սրբան կան—
Սեահեր դաշտերում—խաչ այնքան.
Եւ մխլած Յիսուսներ—քանի հատ.
Համբեցէք, չարւած են անընդհատ:
«Ո՞ւր ես, ո՞ւր Աստըծու դու Որդի,
Տես, գնում են ջարդի,
Եւ ընկեր քո խաչին՝
Տանում են սուր կացին»

Քեզ գգւում է հրճում Սատանան,
Հայրենիքդ իմ, ընկած անպաշտպան.
Գիշերի, արեւի դու երկիր,
Բեկերի թաւր վէրքի պէս կարմիր.
Բեկերի խոցի պէս—
Սեւանա



	Երես.
1. Առկայծող փայլը	5
2. Անցիւր ընկեր	6
3. Սրտամաշ աշուն	7
4. Սօսափներ	8
5. Մի օր ապրող ծաղիկ	9
6. Մղում	10
7. Ինչու բոլորով	11
8. Աշուն	13
9. Ծաղիկներից ցոլաց	14
10. Ոսկի ամպից ծոր տալով	15
11. Գարնան չաւի	16
12. Կուզէի քեզից հեռու մորմուքել	17
13. Բոլորեր	18
14. «Սիրելու համար»	19
15. Զով գիշերին	21
16. Փոթորիկ, փոթորիկ ահուկ	23
17. Մահ	24
18. Ինչու	25
19. Երգիչը	27
20. Ընկերոջս յիշատակին	28
21. Նա լոյսի շողին	29
22. Դարբինը	30
23. Անտառը	31
24. Արծիւ	33
25. Ընկեր, զու անցիւր	35
26. Չկարեկցես ոչ ոքի	36
27. Ձիւն, ձիւն անսպառ	37
28. Ո՞ւր ես տանում ինձ	39
29. Միայնութեան սրտամաշ	40

30. Ա՛խ, ես կուգէի	41
31. Կեանքի յոյդեր	42
32. Փշրւիւր գրիչ	43
33. Փոթորիկ	44
34. Էս գիշերը զո՛վ	46
35. Դու հեռւից խոնջացած	47
36. Իբրեւ քնքոյշ սիրոյ գրաւ	48
37. Ռոմանս	49
38. Մի գնա	50
39. Ո՞ւր եմ գնում	51
40. Մի երեկոյ գունատ աչնան	52
41. Վերջալոյս	53
42. Գարունն Զարթնում	54
43. Անուրջներ	55
44. Բանւորունին	57
45. Հրածեշտի երգերից	59
46. Հարթաւայր	60
47. Լճի ափին	61
48. Ծաղիկ ու սոյլեր	62
49. Զարթնումի առաջին տագնապներ	63
50. Ես դաշտերի սիրուն շուշան	65
51. Գիշերն է զալիս	66
52. Պատրաստել եմ	67
53. Նռան հատեր	68
54. Մո՛ւթն է սենեակս	69
55. Զորամիջին	70
56. Ես աշխարհ եկայ	73
57. Ես սիրում եմ սէղն անտառի	74
58. Քարառչ, վ. Բրիւստովից	75
59. Ես երգում եմ, Գ. Գալինայից	76
60. Բնեւի խոցերը, Վեհեպաւ Իվանովից	77

ՀՀ Ազգային գրադարան



NL0371172

60618